ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1902-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծրագրի հերթա-կան համարը	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
77	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում	77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի ու վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները շարունակական բարելավվել են: Վարձակալության պայմանագրով սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների, ինչպես նաև պայմանագրի այլ պահանջների ապահովման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հաշվետվության համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը 2022 թվականին՝ Երևան քաղաքում եղել է 23,2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 20,6 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 20,2 ժամ/օր: Ջրի որակը 2022 թվականին 98.4% է, ջրաչափությունը կազմում է 99.7%: Գանձվել է շուրջ 27,28 մլրդ դրամ՝ 2021 թվականի 23,07 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 4,21 մլրդ դրամ, Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2022 թվականին կազմել է 94,9%, որը նախորդ տարվա դրությամբ ավել է 0,1 %-ով:		
		77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի	Ջրային կոմիտեի առաջարկով իրականացվում են ուսումնասիրություններ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մի շարք չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման հետ կապված խնդիրների վերաբերյալ, որոնք պարբերաբար քննարկվում		

		մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված բարեփոխումների (այդ թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթում	են Ջրային կոմիտեում: Աշխատանքների խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով անհրաժեշտություն է առաջացել այցելություն կատարել ՀՀ Տավուշի մարզ: Մասնավորապես 2022 թվականի հունիս ամսին տեղերում ուսումնասիրվել են ՀՀ Տավուշի մարզի 3 բնակավայրերի (Աչաջուր, Սևքար, Բաղանիս) ջրամատակարարման համակարգերի վիճակը և վարչական ղեկավարների հետ քննարկվել են դրանց բարելավման հետ կապված խնդիրներն ու ներդրումային կարիքները: Քննարկման արդյունքում որոշվել է 2 բնակավայրերի (Սևքար, Աչաջուր) համար իրականացնել նախագծում, քանի որ Բաղանիս գյուղում ջրամատակարարման ցանցը ամբողջովին վերանորոգվել է «Հայաստան» Համահայկական հիմնադրամի կողմից: Վերը նշված 2 բնակավայրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար կապալառու կազմակերպության հետ կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, որը գտնվում է մշակման փուլում:		
		77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում՝ ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար	Ներդրումների իրականացման արդյունքում Վարձակալի կողմից չսպասարկվող ՀՀ մարզերի մի շարք բնակավայրերից ստացված սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերն ու տեխնիկական բնութագրերն ուսումնասիրվել են Ջրային կոմիտեում և նախագծերի վերաբերյալ ներկայացվել են համապատասխան դիրքորոշումներ: Սպասարկվող բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի հայտերը փոխանցվում են Վարձակալին՝ մասնագիտական դիրքորոշման ներկայացման նպատակով:		
		77.4 «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների		«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի վերակազմակերպման գործընթացը ՀՀ բաժնետիրական ընկերությունների մասին	

		մատուցման համար սահմանված կարգով լիցենզիայի տրամադրում և այդ բնագավառում գործունեության վերսկսման անհրաժեշտ պայմանների ստեղծում		օրենքի դրույթների համաձայն հնարավոր չէ իրականացնել, քանի որ զուտ ակտիվները բացասական են: Քննարկումների արդյունքներով առաջարկվել է շրջանառել ընկերությունների գործունեության դադարեցման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:	
		77.5 Ջրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիթորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում	Յուրաքանչյուր ամիս ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ բնակավայրերում իրականացվում է խմելու ջրի որակի մոնիթորինգ, որը սահմանված կարգով ներկայացվում է Ջրային կոմիտե: Վարձակալության պայմանագրով սահմանված 107 նմուշառման կետերից ամենօրյա պարբերականությամբ Վարձակալի կողմից իրականացվում է նմուշառում, որը հետազոտվում է 4 որակական հատկանիշներով: Դեռևս բավարար չէ չսպասարկվող բնակավայրերում ջրի որակի մոնիթորինգի մակարդակը՝ ծառայություններ մատուցող մասնագիտական կազմակերպության բացակայությամբ պայմանավորված: Ջրային կոմիտեն՝ ամսական կտրվածքով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը ուղարկում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը՝ իր սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերում խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ պարզաբանումներ		

			ստանալու նպատակով: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է հոկտեմբեր ամսվա խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը, որը փոխանցվել է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը:		
		77.6 «Աերացիա» կեղտաջրերի նոր մաքրման կայանի (ԿՄԿ) շինարարության կապալի միջազգային պայմանագրի ավարտի ապահովում, գույքի ձևավորումից հետո կայանի գործարկում և շահագործման հանձնում, ԿՄԿ-ի վերակառուցման ծրագրի հետագա փուլերի համար նախապատրաստական աշխատանքների իրականացում		Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև 2008 թվականի մայիսի 27-ին ստորագրվել է Երևանի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակում «ՍԱԴԵ» ՋԱԳԸ ֆրանսիական ընկերության հետ 2014 թվականի դեկտեմբերի 30-ին կնքած «Աերացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքներ» (ՈՀՋԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/3) պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի պատվիրատու հանդիսացող Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գործունեությունը դադարեցվել է ՀՀ կառավարության 31.08.2017թ. թիվ 1062-Ն	

				որոշմամբ և վերջինիս կողմից ծրագրերի արդյունքում ստեղծված գույքը և փաստաթղթերը, ինչպես նաև հաշվեկշռում մնացած գույքը իրավահաջորդության կարգով փոխանցվել են «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին, որի գործունեությունը դադարեցվել է ՀՀ կառավարության 28.02.2019թ. N170Ն որոշմամբ: «Աերացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքներ» (ՈՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/3) Պայմանագիրը հանդիսանում է Fidic Red Book (կարմիր գիրք) դասի: Պայմանագրով իրականացված գործընթացների բազմակողմանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Պայմանագիրը Աերացիա ԿՄԿ-ի նոր կայանի (նոր ԿՄԿ) որպես գույքային միավոր ձևավորված լինելու իրավական հիմքերը բացակայում են և Պայմանագիրը հանդիսանում է անավարտ: Պայմանագրի պատվիրատուի	

				իրավունքներն ու պարտավորություններն իրացնելու, պայմանագիրն ավարտելու, իսկ ստեղծված արդյունքը որպես գույքային միավոր ձևավորելու և «Աերացիա» նոր ԿՄԿ-ի հետագա գործարկումն ու շահագործումն ապահովելու նպատակով բազմակողմանի ուսումնասիրություններ և քննարկումներ են կազմակերպվել, պատվիրատուի անունից հանդես գալու իրավահաջորդության հարցը գրավոր քննարկվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության հետ: Վերը նշված քննարկումների արդյունքներն ամփոփվել են ՀՀ ՏԿԵՆ-ում, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա պահին Հայաստանի Հանրապետության անունից Պայմանագրի կողմ հանդես գալու իրավասություններ վերապահված չեն որևէ մարմնի՝ առաջարկվել է մշակել և շրջանառել համապատասխան կառավարության որոշում: Միաժամանակ խնդրի կարգավորման կարևորությունից ելնելով, այն որպես միջոցառում	

				ներառվել է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում: «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին որոշակի իրավասություններ վերապահելու և «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման ծրագրի պայմանագիրն ավարտելու վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված ընթացակարգով շրջանառվել և ներկայացվել է կառավարության աշխատակազմ, նախագիծը բազմաթիվ անգամ քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստերում և առաջարկությունների արդյունքում լրամշակվել է: Նախագծի վերադարձման հիմնական բարդույթը կայանում է նրանում, որ Վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված	

				եզրակացությամբ՝ բացակայում է համապատասխան լիազորող նորմը, և առաջարկվում է ներկայացված հարցի կարգավորումը դիտարկել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում: Հաշվի առնելով վերոգրյալները միջոցառումը հնարավոր չի եղել կատարել: 2023թ. հունվարի 2-րդ տասնօրյակում ՀՀ փոխվարչապետ Տ.Խաչատրյանի մոտ նախատեսվում է քննարկում, որի արդյունքներով կիստակեցվի հետագա քայլերի հաջորդականությունը և իրատեսական ժամկետները:	
		77.7 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման ապահովման, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լոկալ	Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» ծրագրի շրջանակներում մասնագիտացված խորհրդատվական ընկերությունը ներկայացրել է Սևանա լճի շրջակայքում կոյուղաջրերի ապակենտրոնացված մաքրման պիլոտային տարբերակների տեխնիկատնտեսական հիմնավորման զեկույց, որի վերաբերյալ Ջրային կոմիտեն ներկայացրել է առաջարկություններ:		

		կայանների և սարքավորումների տեղադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Գավառի ԿՄԿ-ի համար պիլոտային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կայանը համալրել կեղտաջրերի պարզեցման HUBER ֆիրմայի կառուցվածքով, որն ավելի արդյունավետ կդարձնի կեղտաջրերի մեխանիկական մաքրման գործընթացը: Շինարարական աշխատանքների իրականացման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար հայտարարվել է մրցույթ: Շրջակա միջավայրի նախարարության կողմից նախատեսվում է աշխատանքային քննարկում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:		
		77.8 Պետական սեփականություն հանդիսացող՝ գործող կեղտաջրի մաքրման կայաններից արտահոսող մաքրված կեղտաջրի որակի մշտադիտարկման համակարգի ստեղծում	Վարձակալության պայմանագրի 6-րդ Հավելվածով նախատեսված ներքին համեմատական ցուցանիշներում ներառված են մաքրված կեղտաջրերի որակն ու կոյուղու զննում և սպասարկում ցուցանիշները: Քանի որ գործող մաքրման կայաններում չի իրականացվում կեղտաջրի ամբողջական մաքրում, որի հետևանքով արտահոսող մաքրված կեղտաջրի որակի էական բարելավում հնարավոր չէ ակնկալել, հետևաբար արդյունավետ մշտադիտարկման համակարգը կգործի միայն սահմանված չափանիշներով կեղտաջրի մաքրման դեպքում: Ջրային կոմիտեի և ՏԿԵՆ-ի կողմից քայլեր են իրականացվում նոր մաքրման կայանների նախատեսման ուղղությամբ՝ ՊՄԳ գործիքակազմի կիրառմամբ: Որոշ տնտեսվարողների կողմից կառուցում-շահագործում-հանձնում ձևաչափով համագործակցության նախնական շահագրգռվածության նախաձեռնություններ են ներկայացվել: «Ջրային նախաձեռնություն+» ծրագրի միջնորդությամբ նախատեսվում է «Աերացիա» ԿՄԿ-ում տեղադրել կեղտաջրերի ավտոմատ նմուշառման սարք, որը թույլ կտա մշտական մոնիթորինգ կայան մուտք գործող կեղտաջրերի նկատմամբ՝ հիմնական շեշտադրումը դնելով		

			COVID-19 հարուցիչի հայտնաբերման վրա: Գործընթացում ներգրավված են նաև «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները:		
		77.9. Կոյուղու ցանցին չմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում	Իրականացվում են ուսումնասիրություններ տնտեսվարողների կողմից արտանետվող կեղտաջրերի մաքրման միջոցների ընտրության և կիրառման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման համար: Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» ծրագրի շրջանակներում Խորհրդատուի կողմից ներկայացված տեխնիկատնտեսական հիմնավորման զեկույցում ընդգրկված է նաև առանձին տնային տնտեսությունների կամ դրանց խմբերի համար ապակենտրոնացված փոքր ԿՄԿ-ների առաջարկը՝ անջատված տիղմի կենտրոնացված մշակման հնարավորությամբ: Հաշվետվության վերաբերյալ Ջրային կոմիտեն ներայացրել է դիտողություններ և առաջարկություններ:		
		77.10 «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	Ջրային կոմիտեն 2022 թվականի հոկտեմբերի 31-ին «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացրել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու համար: 2022 թվականի դեկտեմբերի 15-ին ստացվել են որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները: Միաժամանակ առաջարկվել է նախագծին կից ներկայացնել նաև միջոցառումների ծրագիր, որը ներկայումս գտնվում է մշակման փուլում: Ջրային կոմիտեն դիմել է ՀՀ ՏԿԵՆ ժամկետի		

			երկարաձգման և իրատեսական ժամկետի սահմանման համար:		
		77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների իրականացում	2022 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ ԼՈՏ 1 - Շիրակի մարզ. բաշխիչ ցանցի վերակառուցում – 72.8կմ, տնային մուտքագծի կառուցում – 29.6կմ անհատական ջրաչափական հորերի տեղադրում – 1543 հատ, կոյուղու ցանցի վերակառուցում – 7.3կմ: ԼՈՏ 2 – Լոռու և Արմավիրի մարզեր ջրատարի կառուցում – 6.1կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում – 63.7կմ, անհատական ջրաչափական հորերի տեղադրում – 2864 հատ: ԼՈՏ 3 – Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզեր ջրատարի կառուցում – 16.4կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում – 32.0կմ, տնային մուտքագծի կառուցում – 17.2կմ, անհատական ջրաչափական հորերի տեղադրում – 1291 հատ, կոյուղու ցանցի վերակառուցում – 4.8կմ:		
		77.12 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործման ապահովում	Վարձակալի կողմից չսպասարկվող 5 գյուղերի ՋևՋ համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման և շահագործման ապահովման համար ավարտվել է նախնական նախագիծը: Ընթացքի մեջ է աշխատանքային նախագծի իրականացումը:		
		77.13 Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում	ԵՋԲԾ-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 4-րդ և 5-րդ ներդրումային փաթեթներով Մալաթիա-Հաղթանակ և Սիլիկյան թաղամասերի ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վերականգնման և անհատական տնային միացումների փոխարինման և 6-րդ ու 7-րդ լրացուցիչ ներդրումային փաթեթներով Արարատյան պոմպակայանում 3 նոր պոմպերի	Կապալառու կազմակերպությունների ընտրության մրցութային աշխատանքների իրականացումը կսկսվեն Ֆինանսական միջոցների հասանելիության և Ծրագրի իրականացման	

			փոխարինման, Բալահովիտ համայնքի, Փիրումյան և Նոր Խարբերդ թաղամասերի ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վերականգնման և անհատական տնային միացումների փոխարինման, աշխատանքները: Ավարտված են Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները: Նախապատրաստվում է Կապալառու կազմակերպությունների ընտրության մրցույթների իրականացման գործընթացը:	ժամկետների երկարաձգման գործընթացից հետո, որն ընթացքի մեջ է:	
78	Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ	78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և իրականացում	Ջրային ոլորտի զարգացման միասնական տեսլական ձևավորելու, ջրային ռեֆորմներ և «Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգի կայուն զարգացմանն ուղղված հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը» մշակելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հունվարի 10-ի N 28-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Ջրային կոմիտեում կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ: Աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:		
		78.2 «Ոռոգման ջրի մասին» ՀՀ օրենքի մշակում: Ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցում	Միջոցառումը կիրականացվի սահմանված ժամկետում:		
		78.3 Ջրամբարաշինության և պաշարների կառավարման հայեցակարգային մոտեցումների մշակում և առաջարկությունների ներկայացում:	Աշխատանքները դեռևս չեն մեկնարկել: ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2117-Լ որոշմամբ միջոցառման իրականացման ժամկետ է սահմանվել 2024 թվականը:		
79	Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու	79.1.Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական, վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում	Միջոցառման իրականացման համար 2022 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 929,828.9 հազ. դրամ գումար «Կոտայք» և «Սյունիք» ՋՕԸ-երի և «Ջրառ»ՓԲԸ-ի սպասարկման տարածքի ջրանցքներում ջրաչափական սարքավորումների տեղադրման		

	վերահսկողական համակարգով հագեցում		համար՝ ընդհանուր 704 հատ: Կազմակերպված մրցութային գործընթացի արդյունքում հաղթող կազմակերպությունների հետ կնքվել է կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրեր (ինչպես նաև հեղ. հսկողության և տեխ. հսկողության) ընդհանուր 815,777.7 հազ. դրամ արժեքով, որոնցով բացի վերոնշյալ ՋՕԸ-երից և «Ջրառ» ՓԲԸ-ից նախատեսվել է ջրաչափական սարքավորումներ տեղադրել նաև «Արարատ» ՋՕԸ-ի սպասարկման տարածքում ևս 40 հատ (ընդհանուր 744 հատ): Ներկայումս բոլոր աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են, բոլոր սարքավորումներն ի պահ են տրվել կապալառու կազմակերպություններին՝ գարնանը ոռոգման շրջանից առաջ տեղադրելու պայմանով: 2022 թվականին տեղադրվել է 771 հատ սարքավորում, որը ավել է պայմանագրով նախատեսվածից 27 հատով:		
		79.2.Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում	Միջոցառումը կիրականացվի սահմանված ժամկետում: Էլեկտրոնային հարթակի ներդրումը հնարավոր է իրականացնել ոռոգման համակարգերը արդի ջրաչափական սարքավորումներով կահավորելուց հետո:		
80	Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում	80.1.Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով մշակել և իրականացնել կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ		Աշխատանքները դեռևս չեն մեկնարկել:	
		80.2.Իրականացնել ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և	Միջոցառման իրականացման համար 2022 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 591,1 մլն դրամ գումար, որով նախատեսվել էր թվով 6 ոռոգման համակարգերի հիմնանորոգումը:		

		ներդրումային քաղաքականություն	Շինարարական աշխատանքներից երկուսը ավարտվել են՝ ➢ «Թալինի ձախ ճյուղի 7-րդ բաժանարարի 5-րդ վերականգնվող հատված» աշխատանքի շրջանակներում կառուցվել է 2877 գծ.մ ջրանցք, ➢ «Քաղցրաշեն-2 պոմպակայանի մղման խողովակաշարի կառուցում» աշխատանքի շրջանակներում կառուցվել է 1352 գծ.մ երկարությամբ խողովակաշար: «Երևան» ջրօգտագործողների ընկերության կողմից սպասարկվող Մասիսի տարածաշրջանի Դաշտավան, Նորամարգ, Դարբնիկ, Մասիս, Զորակ, Սիս և Սայաթ-Նովա համայնքների ինքնաշատրվանող խորքային հորերի բաժանարար կետերի կահավորումը փականներով և ջրաչափերով» աշխատանքը մեկնարկել է 2022թ. նոյեմբերին և կավարտվի 2023 թվականի առաջին եռամսյակում: 3 աշխատանքների՝ ➢ «Արմաշ պոմպակայանի 4-րդ գոտու հեռացնող ջրատարի վերականգնում», ➢ «Սուրենավան 3-րդ գոտու ջրագծի հիմնանորոգման աշխատանքներ», ➢ «ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի թվարված հատվածի վերականգնման աշխատանքներ» իրականացումը մրցույթներին մասնակից չլինելու պատճառով տեղափոխվել է 2023 թվական:		
81	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	81.1.Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում	«Երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում» ենթաբաղադրիչով նախատեսվում է վերականգնել 22 միջտնտեսային ջրանցքների 55,95 կմ ընդհանուր երկարությամբ առավել քայքայված հատվածներ: Առ 23.12.2022թ. հիմնանորոգվել են 51,24 կմ ընդհանուր երկարությամբ հատվածներ: Ոռոգման շրջանի մեկնարկով պայմանավորված հայտարարվել է տեխնիկական դադար: 2022թ.		

			ոռոգման շրջանի ավարտից հետո աշխատանքները վերսկսվել են ու կավարտվեն մինչև 2023թ. ոռոգման շրջանի սկիզբը: 2022թ. ընթացքում վերականգնվել են միջտնտեսային ջրանցքների 22,44 կմ երկարությամբ հատվածներ: «Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում» բաղադրիչով նախատեսվել է 105 բնակավայրերում հիմնանորոգել 265,9կմ ընդհանուր երկարությամբ ներտնտեսային նշանակության ջրանցքներ: Աշխատանքները հիմնականում ավարտված են (համակարգերը շահագործվում են), բացառությամբ Մեծամոր համայնքի՝ սահմանային ուղեկալի ներսում գտնվող Բերքաշատ բնակավայրի ներտնտեսային ցանցի շինարարական աշխատանքների: Ոռոգման շրջանի մեկնարկով պայմանավորված հայտարարվել է տեխնիկական դադար: 2022թ. ոռոգման շրջանի ավարտից հետո աշխատանքները վերսկսվել են ու կավարտվեն մինչև 2023թ. ոռոգման շրջանի սկիզբը: Առ 23.12.2022թ. հիմնանորոգվել են 260,9 կմ ներտնտեսային ջրանցքներ: 2022թ. ընթացքում հիմնանորոգվել են 33,67 կմ ներտնտեսային ջրանցքներ: 2022 թվականի սեպտեմբերից մեկնարկել են շուրջ 65,8 կմ ընդհանուր երկարությամբ երկրորդ կարգի 27 ջրանցքների և շուրջ 16,1 կմ ընդհանուր երկարությամբ ներտնտեսային ոռոգման 3 համակարգերի վերականգնման/կառուցման լրացուցիչ աշխատանքներ: Առ 23.12.2022թ. վերականգնվել են երկրորդ կարգի ջրանցքների 6,4 կմ ընդհանուր երկարությամբ հատվածներ:		
82	2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի	82.1.«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում	2022 թվականի հունվարի 24-ին տեղի է ունեցել «Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցում» մրցույթի շրջանակներում ներկայացված առաջարկների բացումը: Գնահատման փուլն ավարտվել է և դեկտեմբերի 6-8 տեղի են ունեցել		

	նախապատրաստում և իրականացում		պայմանագրային բանակցությունները: Ներկայումս ընթանում են պայմանագրի շնորհման և կնքման գործընթացները: ՀԶՎԳՊ-ի դրույթների կատարման շրջանակում Իրականացման խորհրդատուն (ԻԽ) իրականացրել է ազդակիր անձանց սեփականության իրավունքի գրանցում, ժառանգության գործերին ձևակերպմանը և ազդակիր տարածքներում նախատեսվող/գործող ՓՀԷԿ-երի մասով փոխհատուցման գործընթացի նախապատրաստմանն առնչվող աշխատանքներ: Սույն թվականի նոյեմբերի 11-ից մեկնարկել է ՀԶՎԳՊ-ով նախատեսված «Փոխհատուցման և օժանդակությունների տրամադրման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման հանձնաժողովի» գործունեությունը: Մշակվել են ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Ջրաձոր բնակավայրի կառուցապատման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները՝ Ջրաձոր բնակավայրի գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծերը և քաղաքաշինական կանոնադրությունը: Ներկայացվել է վերջիններիս փորձաքննության դրական եզրակացությունը:		
		82.2. «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2. ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում	Ֆինանսական դեֆիցիտը ծածկելու նպատակով Փուլ 2-ի ֆինանսական միջոցներն ուղղվել են Կապսի պատվարի շինարարությանը:		
		82.3.Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում:	1.1 Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման շրջանակներում կառուցված է հիմնական պատվարի շուրջ 69 մետր (ընդհանուր 85մ) բարձրությամբ հատվածը, մասնավորապես՝ 1.2 Ավարտվել են ջրի փոխադրող համակարգի (ընդհանուր 11 կմ) և Վեդի ու Խոսրով գետերի		

		Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ	վրա երկու ջրառ հանգույցների շինարարական աշխատանքները: 2.Վեդու ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող շուրջ 4000 հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթերն ամբողջությամբ մշակված են: 2.1 Վեդի ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող փորձնական հողատարածքներում ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումը նախատեսվում է ավարտել 2022թվականի դեկտեմբերին: Շինարարական աշխատանքները կմեկնարկեն 2023 թվականին:		
83	Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն	83.1.Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Արգիճիի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները մեկնարկված են:		
		83.2.Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Աստղաձորի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները մեկնարկված են:		
		83.3.Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ելփինի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները մեկնարկված են:		
		83.4.Վայոց ձորի Խնձորուտի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Մեկնարկվել է ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստական աշխատանքները:		
		83.5.Վայոց ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցման նախագծային	Մեկնարկվել է ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստական աշխատանքները:		

		փաստաթղթերի կազմում և կառուցում			
		83.6.Վայոց ձորի Խաչիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Քննարկվում են ջրամբարի կառուցման իրականացվելիության հարցերը՝ պայմանավորված ջրապահովվածության խնդիրներով:		
		83.7. Վայոց ձորի մարզում Գետիկ վանքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Մեկնարկվել է ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստական աշխատանքները:		
		83.8. Վայոց ձորի մարզում Զիրակի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Քննարկվում են ջրամբարի կառուցման իրականացվելիության հարցերը՝ պայմանավորված սահմանային խնդիրներով:		
		83.9. Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Քասախի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները մեկնարկված են:		
		83.10.Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Քննարկվում են ջրամբարի կառուցման իրականացվելիության հարցերը՝ պայմանավորված ջրապահովվածության խնդիրներով:		
		83.11.Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Մեկնարկվել է ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստական աշխատանքները:		

		83.12.Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Մեկնարկվել է ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստական աշխատանքները:		
		83.13.Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարվել է կրկնակի մրցույթ:		
		83.14.Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Քննարկվում են ջրամբարի կառուցման իրականացվելիության հարցերը՝ պայմանավորված սահմանային խնդիրներով:		
		83.15 Սյունիքի մարզում Լիճքի (Մեղրի) ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարվել է կրկնակի մրցույթ:		
		83.16.Կապսի ջրամբարից մինչև Թալինի մայր ջրանցքի ոռոգման ջրատարի կառուցում	Միջոցառումը կիրականացվի սահմանված ժամկետում:		
		83.17.Հերհերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցում	Ներկայումս Հերհերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման նախագծի ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի իրականացման համար 3 անգամ կազմակերպվել է մրցութային գործընթաց, որոնք չեն կայացել մասնակից չլինելու պատճառով:	Ներկայումս Հեր-հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման նախագծի ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի իրականացման համար 3 անգամ կազմակերպվել է մրցութային գործընթաց, որոնք չեն կայացել մասնակից չլինելու պատճառով: Առաջիկայում կմեկնարկի «Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման	

				գործողությունների» ծրագրի իրականացման նպատակով հանրային շահ ճանաչելու և սեփականատերերին փոխհատուցելու խորհրդատուի ընտրության մրցութային գործընթացները, որի արդյունքներով կշրջանառվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ:	
		83.18.Գեղարդալճի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում	Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2165-Ն որոշման, Գեղարդալճի ինքնահոս համակարգի չկառուցված հատվածի շինարարական աշխատանքներն ավարտվել են սահմանված ժամկետում:		
		83.19. Օրվա կարգավորիչ 31 հատ ջրավազանների կառուցում, վերակառուցում և նախապատրաստական աշխատանքների իրականացում	Օրվա կարգավորման թվով 31 ջրավազանների կառուցման և վերակառուցման համար, Ջրային կոմիտեի հետ կնքված համապատասխան պայմանագրերի շրջանակներում խորհրդատուների կողմից իրականացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների առաջին փուլը: Խոհրդատուների կողմից ներկայացվել են ՕԿՋ-երի նախնական նախագծերը և դրա հետ կապված համապատասխան փաստաթղթերը:		
84	«Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում	84.1.Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի վթարային հատվածների ուսումնասիրություն, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների իրականացում	Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են, շինարարական աշխատանքների իրականացման համար կապալառուի հետ կնքվել է պայմանագիր, աշխատանքները ընթացքում են: Նախագծով նախատեսված շուրջ 220 մ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածներից վերանորոգվել են շուրջ 114 մ ընդհանուր երկարությամբ հատվածներ:		

85	Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում	85.1.Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում	ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի «Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման ընդհանուր շուրջ 197.93 կմ երկարությամբ աշխատանքներ: Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում իրականացվել են գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:		
86	Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում	86.1.Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների իրականացման կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում	2022 թվականին նախատեսված հակահեղեղային առաջնահերթ 10 միջոցառումներից բոլոր աշխատանքները մեկնարկել են: Ավարտվել են հետևյալ աշխատանքները՝ ➢ «Մեծամորի հեղեղատարի հունի մաքրում մոտ 1000մ և ափապատնեշի բարձրացում մոտ 150մ երկարությամբ», ➢ «Գավառագետի հունի մաքրում մոտ 4200 մ», ➢ «Որոտան գետի հունի մաքրում Սիսիան քաղաքի կենտրոնական կամրջից վերև և ներքև մոտ 1400 մ հատվածում», ➢ «Երվանդաշատ համայնքի Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի բարձրացում», ➢ «Մեծամոր գետի ափապատնեշի մոտ 800մ հատվածի բարձրացման», ➢ «Այգեձորի մայր ջրանցքին զուգահեռ հենապատի ամրացում մոտ 70մ երկարությամբ», «Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատերի վերականգնում մոտ 600մ երկարությամբ հատվածում»: ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2000 մ հատվածում», «Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600մ և ափերի ամրացում շուրջ 150 մ Ճամբարակ խոշորացված համանքի Մարտունի գյուղի տարածքում» և «Նարեկի սելավատարի հունի մաքրում 2945 մ և ափերի ամրացում 380 մ» աշխատանքների ավարտը նախատեսվում է 2023թ-ին:		

87	Ոռոգման համակարգերում գույքի առկայության և վիճակի գնահատում	87.1. Իրականացնել ոռոգման համակարգերի (ջրանցքներ, ջրամբարներ, խորքային հորեր, ջրատար խողովակներ, պոմպակայաններ, շենքեր, շինություններ, մեքենամեխանիզմներ, հիդրոտեխնիկական այլ կառուցվածքներ և այլն) գույքագրում և գնահատում	Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» ինստիտուցիոնալ բաղադրիչի շրջանակներում նախատեսվող «Ոռոգման համակարգերի գույքագրում, գնահատում և քարտեզագրում» միջոցառումների իրականացման համար, ՀՏՋՀ-ի կողմից կազմակերպվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող չի ճանաչվել: Ներկայումս ՀՏՋՀ-ի կողմից մշակվում է տեխնիկական առաջադրանք:		
88	Գործող ջրամբարների պատշաճ շահագործում	88.1.Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ	Ազատի ջրամբարի հատակային ջրթող կառուցվածքի վերականգնման աշխատանքների մասով՝ քննարկվում է առկա նախագծերի վերահաշվարկի գործընթացը: ՀՀ Շիրակի մարզի Արփի լճի ջրամբարի մասով քննարկվում են վերականգնման աշխատանքների իրականացման խնդիրները: ՀՀ Կոտայքի մարզի Մարմարիկի ջրամբարի ջրծեծ-ջրմարիչ հանգույցի վերակառուցման աշխատանքներն ավարտվել են: Ապարանի ջրամբարի ճնշումային թունելի մետաղյա երեսպատվածքի վերականգնման աշխատանքները ընթացքի մեջ են: ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի վերականգնման և վերազինման աշխատանքների նախագիծը վերահաշվարկվել է նոր գնման գործընթաց մենարկելու նպատակով: Հայտարարվել է նոր մրցույթ: Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար պայմանագիր է կնքվել, նախագծման աշխատանքներն ընթացքի մեջ են:		
		88.2.Յուրաքանչյուր ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակում	Ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը կզբաղվի ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակմամբ:		